# ՃՐԱԳԱԿԱԼԻ ԱՌԱԿԸ

**ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. Մար. 4:21-25**

*21 Եվ նրանց ասաց. «Մի՞թե ճրագը բերվում է, որ գրվանի կամ մահճի տակ դրվի. չէ՞ որ*
*ճրագակալի վրա պիտի դրվի: 22 Այդպես էլ չկա ծածուկ բան, որ հայտնի չդառնա, և չի եղել*
*մի գաղտնիք, որ հայտնի չի դարձել: 23 Ով լսելու ականջ ունի, թող լսի»: 24 Եւ ասեց*
*նորանց. «Ուշադի՛ր եղեք, թե ի՛նչ եք լսում. ինչ չափով որ չափեք, նույնով էլ ձեզ համար*
*կչափեն, և ձեզ՝ լսողներիդ, կավելանա: 25 Որովհետև ով ունի, նրան կտրվի, իսկ ով չունի,*
*նրանից կվերցվի նաև այն, ինչ ունի»:*

> ***21 Եվ նրանց ասաց. «Մի՞թե ճրագը բերվում է, որ գրվանի կամ մահճի տակ դրվի. չէ՞ որ ճրագակալի վրա պիտի դրվի: Ի՞ՆՉ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԼԱՄՊԸ:***
>
> ***ԻՆՉՊԵՍ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՊԵՏՔ Է ՍԵՐՄԱՆՎԻ ՍՐՏԵՐՈՒՄ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՊԵՏՔ Է ՓԱՅԼԻ ՍՐՏԵՐՈՒՄ: ԱՅԺՄ ՀԻՍՈՒՍԸ ՇԱՏ ՀՍՏԱԿ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ, ԵՐԲ ՆԱ ՓԱՅԼՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ՍՐՏՈՒՄ:***

## 1. ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՀԻՍՈՒՍԻՆ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՅՍԸ:

*Հովհաննես 8:12 Արդ Հիսուսը նորից խոսեց նրանց հետ ու ասաց. «Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի քայլի, այլ կյանքի լույսը կընդունի»:*

*Հովհաննես 12:35-36 – Այդժամ Հիսուսը նրանց ասաց. «Մի փոքր ժամանակ դեռ լույսը ձեր մեջ է. քայլե՛ք, քանի դեռ լույսն ունեք, որպեսզի խավարը ձեզ չտիրի: Ով քայլում է խավարում, նա չի իմանում, թե ու՛ր է գնում: Քանի դեռ լույսն ունեք, հավատացե՛ք լույսին, որպեսզի լույսի որդիներ լինեք»:*

## 2. ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՁԵԶ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՅՍԸ:

*Մատ. 5.16 - 16 Այսպէս լուսավորէ ձեր լույսը մարդկանց առաջին, որ **ձեր բարի գործերը** տեսնեն, եւ փառավորեն ձեր Հօրը որ երկնքում է:*

*Առակաց 20:27 – **Մարդու հոգին** Տիրոջ ճրագն է. նա քննում է մարմնի բոլոր խորքերը:*

*Հով. 5:35 - 35 **Հովհաննեսը այն ճրագն էր՝** որ վառվում էր եւ լույս էր տալիս.*

*Մատ. 25:4 - 4 Սակայն իմաստուններն **իրանց ամաններում** ձէթ վեր առան իրանց լապտերների հետ մէկտեղ:*

## 3. ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՁԵՐ ՏԵՍՆԵԼՈՒ ԶԳԱՅԱՐԱՆԸ:

### ՄԱՐՄՆԻ ՃՐԱԳԸ ԱՉՔՆ Է – ՈՒՇԱԴԻՐ ԵՂԵՔ ԹԵ ԻՆՉ ԵՔ ՏԵՍՆՈՒՄ (ՂՈՒԿ. 11:34)

**ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԳԵՐԻՇԽՈՂ ԶԳԱՑՈՒՄՆ Է.**

***Հետազոտությունը գնահատում է, որ մեր ընկալման, ուսուցման, ճանաչողության և գործունեության ութսունից ութսունհինգ տոկոսը միջնորդավորված է տեսողության միջոցով:***

***...արդ երբոր աչքդ պարզ է, բոլոր մարմինդ էլ լուսավոր կ'լինի. բայց երբոր չար է, մարմինդ էլ խավար կ'լինի: 35 Ուրեմն զգո՛յշ եղիր. գուցե այն լույսը, որ քո մեջ է, խավար լինի: 36 Եթե ամբողջ մարմինդ լուսավոր է, և ոչ մի խավար մաս չկա, ամբողջը լուսավոր կլինի, ինչպես ճրագն է իր ճառագայթով լուսավորում քեզ:***

*Եփ. 1:18 - 18 Որ ձեր սրտերի աչքերը լուսավորուելով՝ գիտենաք, թէ ի՞նչ է նորա կոչումի յույսը, եւ ինչքա՛ն է իր ժառանգութեան փառավոր մեծությունը սուրբերում.*

## 4. ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՁԵՐ ԼՍԵԼՈՒ ԶԳԱՅԱՐԱՆԸ:

***23 Ով լսելու ականջ ունի, թող լսի»: 24 Եւ ասեց նորանց. «Ուշադի՛ր եղեք, թե ի՞նչ եք լսում.***

- ***Նա կոչ է անում մեզ լինել խորաթափանց՝ քննադատաբար նայելով մեր լսածին: Քրիստոսի լույսը փայլելու համար մենք պետք է ճիշտ զանազանենք Նրա ձայնը՝ կենդանի Խոսքը: Մեզ համար Նրա ձայնը լսելի չէ, այլ տեսանելիորեն կարդացվում է հավերժական Սուրբ Գրքում:***

  ***Սաղ. 119:105 - Քո խօսքը ճրագ է իմ ոտների համար, եւ լոյս իմ ճանապարհի համար:***

- ***Մենք ուղակի շատ ժամանակ մարդկանց մեկնաբանությամբ ենք նայում Աստծո Խոսքին:***

  *25 Որովհետև ով ունի, նրան կտրվի, իսկ ով չունի, նրանից կվերցվի նաև այն, ինչ ունի:*

  *Ղուկ. 12:35 - 35 Թող ձեր գոտիները մեջքներից կապված լինեն, ու ճրագները՝ վառված:*